Մրցույթ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի «Կարճաղբյուրի Ա. Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզկուլտուրայի (9 դասաժամ), տեխնոլոգիայի (10 դասաժամ), երաժշտության (3 դասաժամ), կերպարվեստի (1 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում է առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել.

Դիմում /Ձև 1/, մեկ լուսանկար՝ 3X4 չափի
Անձնագիր.
Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ)
Աշխատանքային գրքույկի պատճեն. (առկայության դեպքում)
«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում
Ինքնակենսագրություն (Ձև 5).
Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ

ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ
Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում)

Որակավորման տարրակարգ (առկայության դեպքում):

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկը ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերցնել և համալրել դրանք:

Փաստաթղթերը ընդունվում են 2024 թ. հունվարի 29-ից փետրվարի 9-ը ներառյալ, ամեն աշխատանքային օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա փետրվարի 15-ին՝ ժամը 13:00-ին, ՀՀ Գեղարքունիքի մարզի Կարճաղբյուրի Ա.Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոցում:

Հասցեն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, գյուղ Կարճաղբյուր, 5 փողոց, թիվ 18: Տեղեկությունների համար զանգահարել՝ 077-63-33-07 հեռախոսահամարով: